ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62, հեռ. (0235) 22383; (010)250519, էլ. հասցե artashatmeria@artashat.am;
artashatmeria@gmail.com

05 սեպտեմբերի 2024թ.N Ե–4424

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Պ–Ն ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/52 ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 1 չափաբաժնի մասով Արտաշատի համայնքապետարանի /այսուհետև՝ Պատվիրատու/ և Քլին Զոն ՍՊԸ-ի միջև /այսուհետև՝ Ընկերություն/ 13 հունիսի 2024թ. կնքվել է թիվ N ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/52-1 ծածկագրով <<Մանկական խաղահրապարակների և մարզասարքեր>> մատակարարման պայմանագիրը /այսուհետև՝ Պայմանագիր/:

Ապրանքների մատակարարման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Վաճառողը պարտավորվում է մատակարարել Մանկական խաղահրապարակներ և մարզասարքեր: Որպես պայմանագրի կատարման ժամկետ սահմանվել է «Ֆինանսական միջոցների նախատեսվելու դեպքում Կողմերի միջև համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 22 օրացուրցային օրվա ընթացքում» ժամկետը: Կողմերի միջև 08 հուլիսի 2024թ. կնքվել է թիվ N ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/52-1 ծածկագրով պայմանագրի թիվ 01 համաձայնագիրը:

Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի կողմից Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման արդյունքում պարզվել է, որ կատարողի կողմից չեն պահպանվել Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածի Տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքների մատակարարման պահանջները:

Ընկերությունը խախտելով Պայմանագրով սահմանված պարտավորությունները չի մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքները:

Արտաշատի համայնքապետարանը՝ ղեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 2.1.7-րդ կետի «բ» ենթակետի պահանջով՝ միակողմանի /ամբողջությամբ/ լուծել է կնքված Պայմանագիրը: Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի օգոստոսի 22-ին և պայմանագիրը օգոստոսի 22-ի դրությամբ համարվել է լուծված:

Հիմք ընդունելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի և 2-րդ մասի պահանջները՝ Պատվիրատուն գտնում է, որ «ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/52-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված Քլին Զոն

ՍՊԸԻՆ անհրաժեշտ է ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
Կից ներկայացվում է Քլին Զոն ՍՊԸ-
ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ աղյուսակը՝

Մասնակցի						
			գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			
անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը/	գործունեության հասցեն	խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
Քլին Զոն ՍՊԸ	02662083	Ք. Երևան, Վարդանանց 109/21		«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետ		05 սեպտեմբերի 2024թ., թիվ 4131-Ա ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/52

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Կապ. Գնումների բաժնի պետի ժ/պ
Փ. Հակոբյան
Հեռ.՝ 043 12 12 02